գնալով բուռն կերպարանք է առնում: Զգում է որ ինքը կորուստի ճամբի վրայ է, եւ դիմում է Աստծուն որ իր ձեռքից բռնէ: Բայց հէնց այդ աղօթքի մէջ, նա տարւում է իր հոգին զբաղեցնող նոյն աշխարհով, ու ահա իր ներքին աչքերի հանդէպ կանգնած է Սէդան եւ իրեն է կանչում:

Ու մի րոպէ, նրա մէջ վանական զգացումը յաղթած, խոստվանվում է եւ մեղքերի թողութիւն առնում. բայց քիչ վերջը մենք տեսնում ենք Աբեղային՝ կղզիի հարաւային ժայռերի մէջ, մինակ, ցնորքներով պաշարուած: Նրա աչքի առաջ ծովափը լցուած է միգանոյշներով, խայտուն աղջիկներով ու նոյնչափ հմայիչ պատրանքներով,– որոնք զոյգ զոյգ եղած, աշխարհի օրէնքն են ցոյց տալիս Աբեղային:

Այդ պատկերի հանդէպ նա մտացի սլանում է դէպի իր ճգնաւորական կեանքը, համեմատում է իրական աշխարհի հետ, ու վերջինիս ակնյայտնի գերազանցութիւնը խօսում է իր սրտին. մտածում է մի վայրկեան թէ արդեօք իր անցած կեանքը միայն զրկա՞նք է եղել, թէ դրա փոխարէն որեւէ վարձատրութիւն կայ:

Եւ մինչ մտածում է որ ամէն ինչ ունայնութիւն է եւ թերեւս չարժէ ունայն բաների ետեւից գնալ, որոնք անցողական են, եւ ահա նորից Սէդան քողով ծածկուած իր ամբողջ հասակով, ունայնութեան փոսն է լեցնում իր ներկայութեամբ, իր սէրով, իր երգով, իր հմայքով: Ուրախութիւնից ու յուզմունքից ուշաթափւում է: Երբ արթնանում է, չգիտէ ի՞նչն է իրաւ, ի՞նչն է սուտ: Չգիտէ թէ իրաւ ինք կ'ապրի՞ թէ ոչ:

Ու արդէն Աբեղան կարծում է թէ Հին աստուածներ գոյութիւն ունին եւ թէ նրանք են յաղթողը: Աբեղայի մէջ Հին աստուածների գաղափարը հետզհետէ վեր է բարձրանում. ուրիշ խօսքով մինչեւ այժմ իր վարած վանական կեանքը կորցնում է իր հմայքը նրա աչքում: Դրանից յետոյ է որ նա ներկայանում է Վանահօրը եւ յայտնում՝ որ կեանքը Հին աստուածներինն է:

Վանահօր եւ Աբեղայի միջեւ տեղի ունեցող պայքարը բնորոշում է այն հիմնական խնդիրը, որ կազմում է այս տոռամի հիմնաքարը. Վանահայրը որպէս կողմնակից